

ՀԱՅԵՐԻ ԱՐԺԱՆԻՔԸ (ԱՐԺԵՆՈՐՈՒՄԸ)

Posted on January 14, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Ռուբեն Յովակիմեան, ՍԵՆ Ռաֆայել, Ֆրանսիա, 14 Յունուար 2021**«Ժողովրդավարութիւնն նշանակում է կառավարում
այլախոհ պայմաններում, բայց նա արդիւնաւետ է,
եթէ յաջողուի փակել շատախօս բերանները»:**

Կլեմանտ Էտլի

«Յաղթելու ենք» յանկերգը հաճելի եւ շոյող, նոյնիսկ համոզիչ էր շատերի համար, բայց ցաւօք, մեզ բաժին ընկաւ՝ չարաբաստիկ պարտութիւնը իր հետեւանքներով, որ ինչքան էլ դժուար լինի պիտի հաշտուենք այդ ցաւալի մտքի հետ եւ փորձենք նուազագոյնի հասցնել մեր բազմատեսակ կորուստների հետեւանքները, մի բան, որ դժուարութեամբ իրագործելի պիտի լինի՝ տեսնելով ապակառուցողական այն մթնոլորտը, որ ստեղծել են ընդդիմադիրները նախկինների օժանդակութեամբ եւ օրհնութեամբ՝ փայփայելով մէկ նպատակ, որ է՝ հասնել իշխանափոխութեան եւ վերածնել սակաւապետութիւնը:

Իրաւ է եւ անժխտելի, որ երկիրը գտնուում է անդամալոյծ վիճակում, որի հիմնական պատճառներից միայն մէկը համաճարակի յամառ տարածումն է, որին աւելացաւ ձախաւեր աւերիչ պատերազմը, իր բարդ հետեւանքներով եւ աւելի անհանգստացնողը այն է, որ այն հեռու է ակարտուած լինելուց եւ դեռ յայտնի չէ, թէ ինչ տեսակի խարդաւանքներ են որոճում մեր երդուեալ թշնամիները:

Մոսկովեան եռակողմ հանդիպման ընթացքին ակնյայտ էր Ալիեւի յոխորտ եւ լկտի կեցուածքը մեր վարչապետի նկատմամբ, որ ըստ փոխադարձ համաձայնութեան գինադարարի որոշ կետեր (8/9) չեն իրականացուում հակառակորդի կողմից եւ համարձակուեց բացէիբաց յայտարարել, որ, անյայտ պատրուակներով, ձգձգում է գերիների վերադարձը,:

Անհնար է հարց չտալ, թէ ինչո՞ւ եւ ինչպե՞ս հասանք այս օրին, որ անսպասելի եւ անակնկալ չէր, ինչպէս կարծում են ոմանք եւ հաւկուր պիտի լինէինք այն չտեսնելու:

Ժամանակն է, եթէ ուշ չէ, արթնանալու, երեւոյթները ճիշտ գնահատելու եւ անցեալին նայելու՝ նոյն սխալները չկրկնելու, այլոց վերագրելով բոլոր անյաջողութիւնները: Դեռ Իսրայել Օրին յոյսով էր, թէ ռուս ցարը մեզ պիտի պաշտպաներ, իսկ առաջին հանրապետութեան այրերը, երբ հասկացան, որ միայն սեփական ուժերով կարող են իրենց գոյութիւնը փրկել՝ ունեցանք Բաշ Ապարանը եւ Սարդարաբադը՝ պահպանելով հնարաւոր նուազագոյնը, մինչդեռ «մարդասեր» բոլշեւիկների «վեհանձն» որոշմամբ՝ կորան Կարս-Արդահանը, Նախիջեւանը, Արցախն ու Ջաւախքը: Բաքուի եւ Սումգայիթի նախճիրը որակուեց խուլիգանական արարք՝ անյայտ անձանց կողմից, ըստ Գորբաչեւի, նոյնիսկ հազարաւոր փախստականների ու զոհերի փաստը քննութեան

չարժանացաւ, մինչդեռ նոյն անձը մի քանի օր առաջ հանրային իր ելոյթում պնդում էր, թէ անհրաժեշտ է օգնել Արցախին, իսկ սեպտեմբեր 27-ի յարձակումը անակնկալ էր միայն տխմարների համար: Ռ՞վ չգիտեր կամ ո՞վ չէր տեսնում, երբ մեր քթի տակ թուրք-ազերի բանակը անում էր մեծածաւալ զինավարժութիւն, թերեւս զուարճանում էին:

Օտարների հետ կապուած անյաջողութիւնները, որոնք միշտ ուղեկցուել ենք մեր գոյութեան ընթացքին, աւելի մեղմ են, քան ներքին բուռն դաւադրութիւնները, որին ներկայ ենք պարտութիւնից առաջ եւ յետոյ եւ ցաւալի լինելու գագաթն այն է, որ մեր կարելոր եւ որոշիչ դերակատարները, որոնք ջանք պիտի չխնայէին սատար լինելու կառավարութեանը՝ միասին դժուարութիւնները յաղթահարելու միտումով, փոխարէնը քաջարի գտնուեցին կրակի վրայ իւղ դնելու՝ ծանուցելով, որ պատերազմը կորցնողը մեր երկիրը չէ, իր ժողովրդի հետ մեկտեղ, այլ վարչապետը եւ միակ շահաւոր քայլը նրա հրաժարականն է:

Բացատրութիւն, առաւել եւս տրամաբանութիւն չեմ գտնում, երբ երկրի նախագահը, որ մի քանի առիթներով արդէն վարչապետի հրաժարման անհրաժեշտութեան մասին իր կարծիքը յայտնել էր, դարձեալ, լինելով Լոնդոնում՝ ոտքի վիրահատումի առիթով, չվարանեց այնտեղից կրկին առաքել իր յոյժ կարելոր եւ անհրաժեշտ պատգամը միեւնոյն հրաժարականի պահանջով, որ ոչ այլ ինչ է, քան 17+նախկինների հետ համագործակցում: Եթէ մեր յարգարժան նախագահը, որ իմաստութեան պակաս չունի եւ իր բարձր գրագիտութեամբ՝ այդ պահանջի հետ նաեւ համապատասխան լուրջ թեկնածու առաջարկեր, ապա պիտի ծափահարէի եւ երախտիքս յայտնէի, բայց երբ այդ պատասխանատու պետական անձը միանում է ցուցարար ամբոխին, կարծեմ ինդիրը լուրջ եւ դաւադիր պատուէրի՝ ընդհուպ հրամանի տեսք է առնում, իսկ նման լիազօրութիւնը իր պաշտօնին մաս չի կազմում, մինչեւ իսկ ուշադրութեան արժանի է, որ նա չցանկացաւ մասնակցել ժողովուրդի եւ վարչապետի հետ մեկտեղ՝ յայտարարուած եռօրեայ սուզի առիթով երթին դէպի Եռաբլուր, յարգանքի տուրք մատուցելու նահատակների շիրիմներին: Միեւնոյն ձեւով վարուեց Ամենայն Հայոցը: Նման քայլի դիմողները շատ են եւ մոլորեցնում են մարդկանց մտքերը եւ երբ Արամ Ա. վեհափառը յայտնում է, թէ «Հայոց պետականութեան անսասան պահպանումը բոլոր նպատակներէ վեր է» միեւնոյն ժամանակ միանալով 17-ին, մտածելու տեղ կայ:

Արդար լինելու համար, պիտի խոստովանեմ, որ թերեւս վարչապետի հրաժարուելը մեծ սխալ չէ. ոչ թէ իր դաւաճան կամ պարտութեան հեղինակ չլինելու առումով, այլ կրքերի հանդարտ եւ կայուն նոր հիմքեր ստեղծելու նպատակով: Այդ տեսակ նոր մեկնարկի կարիք ունի մեր երկիրը, մինչեւ իսկ, նոր ՉՈՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ստեղծելու համարձակութեամբ, այսքան մեծ ու փոքր ցնցումներից յետոյ արմատական մաքրագործում անելով, բայց ոչ թէ Փաշինեանը Վազգէն Մանուկեանով փոխարինելով, որ համագոր է դէպի անդունդ գնալուն, ահա այստեղ է, որ երկրում, թէեւ քիչ, բայց մնացած անշահախնդիր անձանց մէջ է, որ պետք է փնտրել թեկնածուներին՝

Ներգրաւելով Նաեւ սփիւռքի ներուժը, որ կարող է միայն դրական եւ խելօք լուծում
նկատուել: Աւելին, Փաշինեանը իր աթոռը կաշառքով կամ ընտրութիւնները կեղծելով չէ
որ ունեցել է, այլ օրինական ճանապարհով եւ Նա միակն է, որ իրաւասու է որոշել իր
զնալը կամ մնալը, բայց այն դէպքում, եթէ որոշելու է թողնել զբաղեցրած
պատասխանատու պաշտօնը, ապա Նախընտրելի է, որ ինքը առաջարկի ցանկալի
թեկնածուի անունը, եւ ոչ թէ, ինչ որ ապիկար մէկը,- եւ առանց ընտրութեան,- պիտի
զբաղեցնի մէկ տարով երկրի ղեկավարութիւնը եւ անի այն, ինչ որ տասնամեակների
ընթացքում չի կարողացել, հակառակ պարագային Նախկինները պիտի տիրանան եւ
իրենց ծանօթ սկզբունքներով շարունակեն թալանը:

Արդի պայմաններում մենք չունենք բարձր մակարդակի, կիրթ քաղաքագետ
մասնագետներ՝ իմա հասարակարգ, որ հնարաւոր լինէր Նաեւ ստեղծել հասուն,
առարկայական ընդհանուր ազգային մտածելակերպ կարելոր խնդիրների
վերաբերեալ, հուսկ կարելի է նշել սկզբունքային կետեր.

- Վստահել միայն սեփական ուժերին եւ ուրիշի պարանով հորը չիջնել: Տեսանք թէ
44-օրեայ դժոխքին ինչ պատրաստակամութիւն ցոյց տուեց մեր հիմնական
գործակիցը, իսկ խաղաղապահների ներկայութիւնը մեզ պաշտպանելու
Նպատակով չէ, այլ տարածքը գրաւելու, քանի որ տարիներ շարունակ ռուսների
Ներկայութիւնը մերժուած էր:
- Չիսուել եւ կրկին զինուել, եթէ խաղաղութիւնը կ'ուզենք պահպանել: Դարաւոր
փաստ է, որ օտարը հաշուի է առնում որեւէ ազգի պատերազմական ունակութիւնը
եւ Նրա կազմակերպուածութիւնը:
- Երբեք չթերազնահատել թշնամուն, միշտ լինում են հանգամանքներ, որոնց
տեղեակ չենք, իսկ կռուի դաշտում անակնկալ միշտ է լինում: Անհնար է մոռանալ
մերոնց այն կոչերը, որ եթէ պատերազմ լինի՝ այս անգամ մինչեւ իսկ Բաքուն կը
գրաւենք: Տեսանք պոռոտախօսութեան հետեւանքը:
- Դռները լայն բացել մտաւոր խաւի առջեւ՝ ստեղծել **մտաւորականութիւն**, որ
խեղդուած է անգրագետ օլիգարխների ծանրութեան տակ: Դա միակ ճանապարհն
է հասարակութեան առողջացման համար, երբ բարոյագիտութիւնը (éthique)
բացակայ է:

Այս ցանկը կարելի է շարունակել, բայց յօդուածի Նիւթ չէ եւ յուսանք, որ պիտի
հասունանանք եւ կերտենք ապագան, ստեղծելով մեզ յարմար երկիր՝ մեր ճաշակով:

There are no comments yet.